BACCALAURÉAT GÉNÉRAL

SESSION 2018

ARMÉNIEN

LANGUE VIVANTE **1**

Série **L –** Durée de l'épreuve : **3 heures** – coefficient : **4**

Séries **ES-S** – Durée de l'épreuve : **3 heures** – coefficient : **3**

Le candidat traitera, dans la langue étrangère, l'ensemble des questions de l'épreuve pour laquelle il compose.

L'usage du dictionnaire est interdit.

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

Répartition des points

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

Texte en arménien occidental

ըստ Շահան Շահնուրի

Նահանջը առանց երգի

Փարիզ 1929

Բանանլին չոր աղմուկ մը հանեց կղպանքին մէջ եւ դուռը իր ծխնիներուն[1] վրայ զգուշութեամբ դարձաւ: Նախ գլուխ մը ներս անցաւ բացուածքէն, շուրջը դիտեց վարանումով[2] եւ երբ որ տեսաւ որ ոչ ոք կայ, դուռը ամբողջութեամբ հրեց: Վարէն բան մը չէր ըսուած իրեն, բանալին հոս էր, ինչպէս նաեւ Փիէռին գլխարկն ու վերարկուն: Դուրս ելած չէր կրնար ըլլալ ան. մօտաւոր սենեակ մըն էր թերեւս, բարեկամի մը քով: Նէնէթ կեցաւ պահ մը դրան մէջ ու յետոյ յուսահատ ներս անցաւ ու դուռը գոցեց:

Վերջին յարկի սենեակներէն մէկն էր այս, օդաւետ ու լուսաւոր. կանաչ միագոյն գորգ մը փռուած էր գետինը ու ամէն ինչ մաքրութիւն կը բուրէր: Աջ կողմի անկիւնը լայն անկողին մը կար [...] իր զարթուցիչով[3], դէմը՝ լոգասեղանին[4] [...] սպիտակութիւնը [...], իսկ վրան ապակիի երկար կտոր մը՝ ուր արդուզարդի պիտոյքներ[5] կային քառանկիւն հայելիի մը առջեւ: Ուրիշ անկիւն մը բարձր հանդերձարան[6] մը՝ որուն քով պզտիկ վարագոյր մըն էր քաշուած հագուստ մը ծածկելու համար: Կեդրոնը սեղան մը կը կլորնար ներկուած փայլուն տախտակէ, կրելով դէզ[7] մը գիրքեր որոնք երկու փիղերու մէջտեղ սեղմուած էին: Փիղերէն մէկը

[1] ծխնի - charnière
[2] վարանում - hésitation
[3] զարթուցիչ – réveille-matin
[4] լոգասեղան - lavabo
[5] արդուզարդի պիտոյքներ – des affaires de toilette
[6] հանդերձարան – portemanteau
[7] դէզ - pile

կը նայէր մոխրամանին, իսկ երկրորդը իր պատիճը[8] պատին էր ցցած: Նէնէթն ալ ակնարկը այն կողմ դարձուց, նայեցաւ պահ մը անշարժ, դժգոհութեան շարժում մը ըրաւ [...]: Յետոյ դէպի լուսամուտը ուղղուեցաւ: Պատուհան-դուռ մըն էր այս, որ պզտիկ պատշգամի մը վրայ կը բացուէր. արեւը ողողեր էր զայն. գարնան զմայլելի առաւօտ մըն էր. առողջ ու մաքուր առաւօտ մը [...]: Նէնէթ սկսաւ անհամբերել. վերադարձաւ սեղանին առջեւ, գիրք մը առաւ ու նստաւ, ակնարկը ծանօթի մը՝ Փիէռի գլխարկին: Մէկէն նշմարեց որ ճիշդ առջեւը սեղանին պզտիկ դարակը կիսաբաց էր. քաշեց զայն եւ հաստ տետրակ մը ուշադրութիւնը գրաւելով, առաւ:

Այո՛, ապահով էր: Քիչ մը յուզուած, չես գիտեր ինչու, սկսաւ դանդաղօրէն դարձնել այդ էջերը. Ֆրանսուհիին հետաքրքրութիւնը կրկնապատկուեցաւ. օրագրութիւն մըն էր: Աչքերը յառած այդ խառնափնթոռ[9] գիրերուն, կ՛ուզէր գտնել, կ՛ուզէր անպայման ճանչնալ իսկական Փիէռը, երիտասարդը [...]: Ինչե՞ր կը պատմէին այդ էջերը, մտերիմ ինչ յոյզեր[10], մտածում ու տենչանք[11] կը պարունակէին այդ տողերը, որոնցմէ բան մը չէր կրնար հասկնալ: Հայերէն այդ տառերը բեւեռագրեր[12] էին իրեն համար, «սեւ ու ճերմակ»՝ ինչպէս կ՛ըսէր ինք: Ու անկարող իրականութիւնը տեսնելու, աւելի ինքն իր մէջ կը ջանար անծանօթը գուշակել[13]:

---

[8] պատիճ - trompe
[9] խառնափնթոռ - mélangé
[10] յոյզ - émotion
[11] տենչանք – envie, désir
[12] բեւեռագիր – écriture cunéiforme
[13] գուշակել - deviner

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Նէնէթ որո՞ւն սենեակը կը մտնէ:
2. Ո՞ւր կը գտնուի այս սենեակը:
3. Այս սենեակը երեք նախադասութիւնով նկարագրեցէ՛ք:
4. Դարակին մէջ գտնուող առարկան ինչո՞ւ Նէնէթին ուշադրութիւնը կը գրաւէ: Ի՞նչ կը փնտռէ ան:
5. Նէնէթ Փիէռի օրագրութիւնը ինչո՞ւ չի կրնար կարդալ:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Traitez les deux sujets. (120 mots minimum pour chaque question)

1. երեւակայեցէ՛ք թէ արդեօք ի՞նչ է Նէնէթին եւ Փիէռին կապը: Ինչո՞ւ կ՛ուզէ անոր աւելի մօտէն ծանօթանալ:
2. Նկարագրեցէք ձեր տան նախընտրած սենեակը: Նկարագրեցէ՛ք անոր մթնոլորտը եւ բացատրեցէ՛ք թէ ինչո՞ւ կը սիրէք այնտեղ ժամանակ անցնել:

Texte en arménien oriental

ըստ Շահան Շահնուրի

Նահանջ առանց երգի

Փարիզ 1929

Բանանլին չոր աղմուկ հանեց կողպեքի մեջ եւ դուռը իր առանցքի[1] վրա զգուշությամբ բացվեց: Նախ մի գլուխ ներս անցավ բացվածքից, շուրջը դիտեց վարանումով[2] եւ երբ որ տեսավ, որ ոչ ոք չկա, դուռը ամբողջությամբ հրեց: Ներքեւից ոչ մի բան չէր ասվել իրեն, բանալին այստեղ էր, ինչպես նաեւ Պիեռի գլխարկն ու վերարկուն: Դուրս եկած չէր կարող լինել նա: Մոտակա մի սենյակում էր թերեւս, մի բարեկամի մոտ: Նենեթը կանգնեց մի պահ դռան մեջ ու հետո հուսահատ ներս անցավ ու դուռը փակեց:

Վերջին հարկի սենյակներից մեկն էր այս, օդավետ ու լուսավոր. կանաչ միագույն մի գորգ փռված էր գետնին, ու ամեն ինչից մաքրություն էր բուրում: Աջ կողմի անկյունում լայն անկողին կար [...] իր զարթուցիչով[3], դեմը՝ լվացարանի[4] [...] սպիտակությունը [...], իսկ վրան ապակու մի երկար կտոր՝ ուր արդուզարդի պիտույքներ[5] կային քառանկյուն հայելու առջեւ: Մի ուրիշ անկյունում՝ մի բարձր պահարան, որի կողքին փոքր վարագույր էր քաշված հագուստը ծածկելու համար: Կենտրոնում ներկված փայլուն տախտակից կլոր սեղան կար, վրան մի դեզ[6] գրքեր, որոնք սեղմված էին երկու փղերի մեջտեղում: Փղերից մեկը նայում էր մոխրամանին, իսկ երկրորդը իր պատիճը[7] պատին էր ցցել: Նենեթն էլ հայացքը այն կողմ ուղղեց, նայեց մի պահ անշարժ, դժգոհության շարժում արեց [...]: Հետո դեպի լուսամուտը ուղղվեց: Պատուհան-դուռ էր դա, որ մի փոքր պատշգամբի վրա էր բացվում. արեւը ողողում էր այն. գարնան զմայլելի առավոտ էր. առողջ ու մաքուր մի առավոտ [...]:

---

[1] առանցք - charnière
[2] վարանում - hésitation
[3] զարթուցիչ – réveille-matin
[4] լվացարան - lavabo
[5] արդուզարդի պիտույքներ – des affaires de toilette
[6] դեզ - pile
[7] պատիճ - trompe

Նենեթը սկսեց անհամբեր լինել. վերադարձավ սեղանի առջեւ, մի գիրք վերցրեց ու նստեց, հայացքը ծանոթի՝ Պիեռի գլխարկին: Մեկ էլ նշմարեց, որ ճիշտ առջեւը սեղանի փոքր դարակը կիսաբաց է. քաշեց այն եւ վերցրեց մի հաստ տետրակ, որ գրավեց ուշադրությունը:

Այո՛, ապահով էր: Քիչ հուզված, չգիտես ինչու, սկսեց դանդաղ թերթել այդ էջերը: Ֆրանսուհու հետաքրքրությունը կրկնապատկվեց. օրագիր էր: Աչքերը հառած այդ խառնաշփոթ[8] գրերին, ուզում էր գտնել, ուզում էր անպայման ճանաչել իսկական Պիեռին, երիտասարդին [...]: Ինչե՞ր էին պատմում այդ էջերը, մտերիմ ինչ հույզեր[9], մտածում ու տենչանք[10] էին պարունակում այդ տողերը, որոնցից ոչ մի բան չէր կարողանում հասկանալ: Հայերեն այդ տառերը բեւեռագրեր[11] էին իր համար, «սեւ ու ճերմակ»՝ ինչպես ասում էր ինքը: Ու անկարող իրականությունը տեսնելու, ինքն իր մեջ ավելի էր ջանում անծանոթը գուշակել[12]:

---

[8] խառնաշփոթ - mélangé
[9] հույզ - émotion
[10] տենչանք – envie, désir
[11] բեւեռագիր – écriture cunéiforme
[12] գուշակել - deviner

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Նենեթը ո՞ւմ սենյակն է մտնում:
2. Որտե՞ղ է գտնվում այդ սենյակը:
3. Երեք նախադասությամբ նկարագրե՛ք այդ սենյակը:
4. Դարակի մեջ գտնվող առարկան ինչո՞ւ է գրավում Նենեթի ուշադրությունը: Ի՞նչ է նա փնտրում:
5. Ինչո՞ւ Նենեթը չի կարողանում կարդալ Պիեռի օրագիրը:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Traitez les deux sujets. (120 mots minimum pour chaque question)

1. Պատկերացրեք Նենեթի եւ Պիեռի կապը: Ինչո՞ւ է ուզում ավելի մոտից ծանոթանալ նրան:
2. Նկարագրեք ձեր տան ձեր նախընտրած սենյակը: Նկարագրե՛ք նրա մթնոլորտը եւ բացատրե՛ք, թե ինչու եք սիրում այնտեղ ժամանակ անցկացնել: